ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը,

հաշվի առնելով իրենց երկու ժողովուրդների միջև պատմության ընթացքում հաստատված առանձնահատուկ բարեկամական հարաբերությունները և բազմաբնույթ կապերը,

ցանկանալով իրենց կապերն ամրապնդել դարերի խորքից եկող բարեկամության ոգով և զարգացնել իրենց համագործակցությունը բոլոր բնագավառներում,

վերահաստատելով իրենց հավատարմությունը միջազգային իրավունքից, մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունից բխող պարտավորություններին,

ցանկանալով նպաստել մերձավորարևելյան տարածաշրջանի կայունությանն ու զարգացմանը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Իրենց երկկողմ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը գործում են որպես ինքնիշխան և իրավահավասար պետություններ, բարեկամության ու փոխադարձ վստահության ոգով՝ զարգացնելով համագործակցությունը միմյանց միջև:

Երկու Կողմերը կնքում են այլ համաձայնագրեր սույն Պայմանագրի լույսի ներքո:

Հոդված 2

Երկու երկրների արտգործնախարարությունները կանոնավոր խորհրդակցություններ են անցկացնում երկկողմ հարաբերությունների, տարածաշրջանային և միջազգային խնդիրների վերաբերյալ՝ միմյանց տեսակետները փոխանակելու նպատակով: Այս նպատակով, անհրաժեշտության դեպքում, Կողմերի միջև հանդիպումներ տեղի կունենան երկու երկրների արտգործնախարարությունների, ինչպես նաև այլ նախարարությունների պատասխանատուների միջև՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ քննարկելու նպատակով:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները, ըստ անհրաժեշտության, խորհրդակցություններ են անցկացնում միջազգային այն կազմակերպությունների շրջանակներում, որոնց անդամակցում են:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը հավաստում են զանգվածային ոչնչացման զենքերի զինաթափման համաձայնագրերի վճռական դերը մերձավորարևելյան տարածաշրջանի և միջազգային անվտանգության երաշխավորման գործում: Երկու Կողմերը հատուկ կարևորություն են ցուցաբերում զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանն ուղղված միջոցառումներին և այդ նպատակով համաձայնեցված գործունեություն են ծավալում միջազգային ատյաններում, որպեսզի չմիացած երկրները միանան միջուկային զենքի չտարածման պայմանագրին և իրենց կառույցները դնեն միջազգային հսկողության ներքո:

Հոդված 5

Երկու երկրների միջև խորհրդակցություններ կանցկացվեն ՄԱԿ-ի բանաձևերի կենսագործման աշխատանքի վերաբերյալ, հատկապես երկու երկրների տարածքային ամբողջականության հարցի շուրջ:

Հոդված 6

Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը նպաստում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լիբանանի Հանրապետության Պատգամավորական պալատի միջև համագործակցության հաստատմանն ու փորձի փոխանակմանը:

Հոդված 7

Երկու երկրները կուսումնասիրեն համագործակցության ձևերը միմյանց միջև՝ հետևյալ բնագավառներում.

- տնտեսություն և շինարարություն,
- տրանսպորտ,
- կապ,
- էներգետիկա,
- գյուղատնտեսություն և սննդի արդյունաբերություն,
- ռեսուրսների շահագործում,
- արդյունաբերություն,
- տեխնիկական գիտություններ,

- շրջակա միջավայրի պահպանություն:

Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է անմիջական ներդրումները, համատեղ ծրագրերի իրականացումը, մասնավոր նախաձեռնությամբ խրախուսումը, տեխնիկական և գիտական փորձի փոխանակումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և վարչական բնագավառի մասնագետների վերապատրաստումը:

Կողմերը աջակցում են հյուպատոսական և առևտրաարդյունաբերական հարաբերությունների զարգացմանը, խրախուսում են կապերի ամրապնդումը, հատկապես առևտրաարդյունաբերական և գյուղատնտեսական պալատների միջև:

Հոդված 8

1. Հաշվի առնելով երկու ժողովուրդների միջև առկա բարեկամական կապերը՝ Հայաստանի ու Լիբանանի ժողովուրդների առավել փոխճանաչման նպատակով Կողմերը խրախուսում են մշակույթի և տեղեկատվական հարաբերությունների զարգացումն ու խորացումը: Այդ նպատակի իրականացման համար երկու երկրների համապատասխան իշխանությունները կուսումնասիրեն բոլոր միջոցները:

2. Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը առանձնահատուկ ուշադրությունն կցուցաբերեն՝ Հայաստանում արաբերենի և Լիբանանում՝ հայոց լեզվի ուսուցմանը, քանի որ լեզուն անհրաժեշտ նախադրյալ է երկարաժամկետ համագործակցության համար:

Հոդված 9

Ելնելով երկու երկրների Սահմանադրությունների հիմնադրույթներից և գործող օրենքներից՝ Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը խրախուսում են ապակենտրոնացված համագործակցությունը, մասնավորապես, տեղական մարմինների եղբայրացումը:

Հոդված 10

Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը նպաստում են երկու երկրների դատական ատյանների և հասարակական անվտանգությունն ապահովող, հատկապես՝ ոստիկանության մարմինների միջև համագործակցության զարգացմանը: Կողմերը համագործակցում են մասնավորապես Ինտերպոլի շրջանակներում՝ կազմակերպված հանցագործության, թմրադեղերի անթույլատրելի առևտրի, մաքսանենգության, ինչպես նաև

արվեստի գործերի անօրինական առևտրի և միջազգային ահաբեկչության դեմ պայքարում:

Հոդված 11

Սույն Պայմանագրի դրույթները ոչ մի կերպ չեն անդրադառնում երրորդ պետության նկատմամբ Կողմերի ստանձնած պարտավորությունների վրա և ուղղված չեն նրանցից որևէ մեկի դեմ:

Հոդված 12

1. Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակումից հետո:

2. Սույն Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ, եթե Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին ընթացիկ ժամկետի ավարտից մեկ տարի առաջ գրավոր չզգուշացնի Պայմանագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվական հոկտեմբերի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և ֆրանսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Արաբերեն և հայերեն տեքստերի տարընթերցման դեպքում հիմք է հանդիսանում ֆրանսերեն տեքստը:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի սեպտեմբերի 16-ից: